# ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:

**Դատարան** դիմելու դեպքում Ձեր և §Ð³Û³ëï³ÝÇ Î»Ýïñáݳϳݠ¸»åá½Çï³ñÇ³¦ ´´À-Ç (³ÛëáõÑ»ï` ÐÎ¸) ÙÇç¨ Í³·³Í í»×Á ÉáõÍáõÙ ¿ ¹³ï³ñ³ÝÁ:
Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում:
Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

**Ֆինանսական համակարգի հաշտարարին** դիմելու դեպքում Ձեր և ÐÎ¸-Ç միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը` «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայությունները անվճար են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք ÐÎ¸: ÐÎ¸-Ç åարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին:

ÐÎ¸-Ç åատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսկան համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե`

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել ÐÎ¸-Ç պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. ÐÎ¸-Ç åատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

**Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ**

Հաշտարար` öÇñáõ½ ê³ñ·ëÛ³Ý
Հասցե`0010, ù. ºñ¨³Ý, ì.ê³ñ·ëÛ³Ý 26/1, §¾ñ»µáõÝÇ åÉ³½³ µÇ½Ý»ë Ï»Ýïñáݠ, 4-ñ¹ Ñ³ñÏ, 411 ë»ÝÛ³Ï
Հեռ.` +374 10 582 321, 582 322
Էլ. հասցե` info@fsm.am
Ֆաքս` +374 10 582 421

**Դուք** կարող եք նաև  բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և ÐÎ¸-Ç միջև վեճերը, սակայն կարող է ÐÎ¸-Ç նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ ÐÎ¸-Ý խախտել է օրենքի պահանջները:



**ՀՀ Կենտրոնական բանկ**

| | |
|---|---|
| Հասցե` | 0010, ù. °ñ¨³Ý, ì. ê³ñ·ëÛ³Ý 6 |
| Հեռ.` | +374 10 592 697 |
| Էլ. հասցե` | chairman@cba.am |
| Ֆաքս` | +374 10 565 496 |
| կայք` | www.cba.am |



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և ÐÎ¸-Ç միջև կնքվել է **<u>արբիտրաժային համաձայնություն,</u>** դա նշանակում է, որ ÐÎ¸-Ç հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք ÐÎ¸-Ç հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն:

** Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ ÐÎ¸-Ç չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ ÐÎ¸-Ý կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ÐÎ¸- դեմ կայացված որոշումները: